Արձանագրություն N 5
«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 31.01.2018 թ.
ժ. 10:00

Հանձնաժողովի նախագահ՝ Է. Շաքարյան
Հանձնաժողովի անդամներ՝) Վ. Գուլգուլյան (ԳԱ), Բ. Տեր-Թովմասյան (ԳԱ)
Լ. Գևորգյան (ԲԱ), Ս. Գևորգյան (ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հուրոյան

1.ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 26.01.2018թ թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/55 որոշումը քննարկելու և Գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցին անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն տալու մասին
(Է. Շաքարյան)

1.1 **ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 26.01.2018թ թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/55** որոշումով /կցվում է/, ՀՀ գնումների խորհուրդը արձանագրում է, **Գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցին անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն տալու մասին:**

Հիմք ընդունելով **ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 26.01.2018թ թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/55**

Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 47-րդ կետով՝ որոշեց տալ հնարավորություն **գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցին** 1 աշխատանքային օրվա ընթացքում (մասնակցին ծանուցելու պահից հաշված) **շտկելու անհամապատասխանությունը:**

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման մասին

(Է. Շաքարյան)

2.1 Գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել Մասնակցի կողմից անհամապատասխանության փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդ աշխատանքային օրվա ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Արգիշտիի փողոց 1 հասցեում

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Է. Շաքարյան
Անդամներ՝		Վ. Գուլգուլյան
		Բ. Տեր-Թովմասյան
		Ս. Գևորգյան
		Լ. Գևորգյան
Քարտուղար՝		Գ. Հուրոյան

Արձանագրություն N 6

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/4» ծածկագրով գնման ընթացակարգին հանձնաժողովի նիստի

01.02. 2018թ.
ժամ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Է. Շաքարյան
Հանձնաժողովի անդամներ՝) Վ. Գուլգուլյան (ԳԱ), Բ. Տեր-Թովմասյան (ԳԱ)
Լ. Գևորգյան (ԲԱ), Ս. Գևորգյան (ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հուրոյան

1. <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4>> ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցի կողմից անհամապատասխանություն շտկելու մասին

(Է. Շաքարյան)

1.1 Հիմք ընդունելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 26.01.2018թ թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/55 Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 47-րդ կետով՝ որոշել է տալ հնարավորություն «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մասնակցին ծանուցելու պահից հաշված) շտկելու անհամապատասխանությունը:

31.01.2018թ-ին ոչ ավտոմատ ծանուցման վերոհիշյալ կազմակերպությանը ուղարկվել է անհամապատասխանությունը շտկելու ծանուցում, որը մասնակցի կողմից ուղվել է:

Գնահատող հանձնաժողովը ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն «Հուսալի Կամար» ՍՊԸ –ի կողմից ներկայացված հայտը գնահատվեց բավարար:

2. <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4>> ծածկագրով գնման ընթացակարգի <u>ընտրված մասնակցի մասին</u>

(Է. Շաքարյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ **<<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4>>** ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Հուսալի Կամար» ՍՊԸ **-ին**

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

3. <u>Աշխատանքների կատարման գնման պայմանագրեր կնքելու որոշում ընդունելու մասին</u>

(Է. Շաքարյան)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝

- Երևան քաղաքի վթարային շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքների պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Հուսալի Կամար» ՍՊԸ –ին:

4.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ տաս օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

4. **<u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին</u>**

(Է. Շաքարյան)

Հանձնաժողովը որոշեց՝ պարզեցված ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագրերը կնքելու կամ ընթացակարգի արդյունքում պայմանագրեր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդ օրը ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Է. Շաքարյան
Անդամներ՝		Վ. Գուլգուլյան
		Լ. Գևորգյան
		Բ. Տեր-Թովմասյան
		Ս. Գևորգյան
Քարտուղար՝		Գ. Հուրոյան